



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

11 փետրվարի 2025 թվական

ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահին փոխարինող Քրիստինե Մկոյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/15755/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 22-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ասքանազ Խաչատրյանի ներկայացուցիչ Սարգիս Խաչատրյանը 2024 թվականի դեկտեմբերի 13-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի՝ թիվ ԵԴ1/1016/01/23 քրեական գործի ամբողջ նյութերը՝ քաղկացած 250+60+118+136 էջերից, չորս հատոր և լազերային սկավառակը, նիստերի ձայնային արձանագրությունը տրամադրելուն պարտավորեցնելու, ՀՀ փաստաբանների պալատին իր վստահորդ Ա.Խաչատրյանի շահերը պաշտպանելու համար նոր

հանրային պաշտպան նշանակելուն պարտավորեցնելու և ներկա պաշտպան Սիփան Կետոյանի հանդեպ կարգապահական վարույթ հարուցելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 22-ի որոշմամբ, գործի ենթակայությունը որոշելու նպատակով, այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունվարի 27-ին:

Ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումները.

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, 78-րդ հոդվածի 2-րդ մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 և 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) [Ս]ույն դեպքում ենթադրյալ վեճը չի կրում հանրային-իրավական բնույթ, հայցապահանջով ներկայացված գործողությունները չեն բխում հանրային իրավահարաբերություններից, կապված չեն պարասիսանոդի կողմից՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրացման հետ, իրավահարաբերության մասնակիցների միջև առկա չէ վերադասության- ենթակայության հարաբերություն, այլ ներկայացված պահանջները վերաբերում են քաղաքացի-ՀՀ փաստաբանների պալատ մասնավոր-իրավական

հարաբերություններին, կրում են քաղաքացիաիրավական բնույթ, հետևաբար ներկայացված պահանջները ենթակա չեն քննության ՀՀ վարչական դատարանում»¹:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 14-րդ հոդվածի 1-ին մասին, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 39-րդ հոդվածի 1-ին մասին, 39.10-րդ հոդվածի 1-ին մասին, 41-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերին, 45-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ԵԱԲԴ/3724/02/17 և 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի հունվարի 22-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. «(...) Հայցի փաստական հիմքերն, ըստ էության, հանգում են հանրային պաշտպանի կողմից հայցվորի դատավարական իրավունքների ոչ պարզաճ պաշտպանություն իրականացնելուն և այդ հիմքով հանրային պաշտպանին կարգապահական պարասխանաարվության ենթարկելուն, այլընտրանքային հանրային պաշտպան ունենալու օրենքով ամրագրված իրավունքի իրացումն ապահովելուն և, ըստ այդմ՝ որոշակի սոցիալական խմբին դասվող անձանց իրավունքների պաշտպանության գործիքակազմեր ապահովելուն պարտավորեցնելու:

(...)

[Փ]աստաբանին կարգապահական պարասխանաարվության ենթարկելու առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը պարկանում են հանրային իրավունքին, քանի որ դրանք փաստաբաններին

¹ Տե՛ս դատական գործը, թերթեր 68-72:

կարգապահական պատասխանատվության ենթարկելը լիազորում են քացառապես Պալատին: Ընդ որում, փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև փաստաբանական պալատի խորհրդի կողմից ընդունված Փաստաբանի վարքագծի կանոնագրքով, որն իր հերթին միաված է սահմանելու թույլատրելի վարքագծի այն կանոնները, որոնցով պետք է առաջնորդվեն փաստաբանները իրենց փաստաբանական գործունեության ողջ ընթացքում: Վկայակոչված իրավական կարգավորումներից բխում է, որ խորհուրդը Պալատի ներքին կառուցվածքային համակարգում հանդիսանում է և՛ դրա գործադիր մարմինը, և՛ կարգապահական վարույթ իրականացնող մարմինը: Բացի դրանից, յուրաքանչյուրի՝ սահմանադրորեն երաշխավորված որակյալ իրավաբանական օգնություն սրանալու իրավունքի ապահովումն ուղղված է հանրային շահի սպասարկմանը, ուստի նշված գործառույթի իրականացման առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն ունեն հանրային բնույթ:

Ընդ որում՝ Պալատի խորհրդի կողմից փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կայացվում է Պալատի հանրային իշխանական լիազորությունների գործադրման արդյունքում և միակողմանի ազդեցություն է ունենում հասցեատեր հանդիսացող փաստաբանի համար:

Վերոհիշյալ դիրքորոշման լույսի ներքո քննարկելով հայցվորի՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ պահանջը՝ Դատարանը գտնում է, որ այն չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի նպատակներից, իսկ ներկայացված պահանջը ենթակա չէ քննության ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով:

Անդրադառնալով հայցվորի մյուս պահանջին, այն է՝ ՀՀ փաստաբանների պալատին հայցվորի շահերը պաշտպանելու համար նոր հանրային պաշտպան նշանակել պարտավորեցնելուն՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

(...)

Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից հանրային պաշտպան փրամատրելու կամ փրամատրելը մերժելու հետ հարաբերությունները չեն կարգավորվում մասնավոր

իրավունքի նորմերով, ըստ այդմ, ֆիզիկական անձ վարահորդի և Փաստաբանների պալատի միջև առնվազն սույն դեպքում չեն առաջացել քաղաքացիաիրավական հարաբերություններ, ինչպես նաև հայցադիմումի փաստական հիմքում դրված չէ որևէ փաստարկ, որը արժևորվում է քաղաքացիական իրավունքի որևէ նորմով, հետևաբար Դատարանը գտնում է, որ քննարկվող պահանջը վերոնշյալ պարճառաբանություններով չի հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքի մասին վեճ, ուստի պահանջը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական դատավարության կարգով քննության:

Ինչ վերաբերում է թիվ ԵԴՄ/1016/01/23 քրեական գործի ամբողջ նյութերը՝ քաղկացած 250+60+118+136 էջերից չորս հատոր և լազերային սկավառակը, նիստերի ձայնային արձանագրությունը տրամադրելու պարտավորեցնելու պահանջին, ասյա վերոնշյալ իրավամեկնաբանողական դատողությունների լույսի ներքո Դատարանը գտնում է, որ դրանում նույնպես չկա քաղաքացիական իրավահարաբերության տարր, ուստի քրեական գործի նյութերը տրամադրելու պահանջը վերոնշյալ հիմնավորումներով ևս ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով քննության:

Ընդհանրացնելով՝ Դատարանը գալիս է ամփոփ եզրահանգման առ այն, որ հայցի առարկան կազմող հայցապահանջներից որևէ մեկը ինքնին չի կարող քննության ենթակա լինել քաղաքացիական դատավարության կարգով:

(...)

Վերոնշյալ իրավակարգավորումների լույսի ներքո Դատարանը գտնում է, որ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հանգամանքը պետք է բացառվի մինչև վեճը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա լինելու հանգամանքի ուժով այն ըստ ընդդատության վերահասցեագրելու լիազորության կիրառումը, քանզի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ընդհանուր իրավասության դատարանին ընձեռում է վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը բացառապես վարույթ ընդունելու կամ այն Վճարել դատարան ուղարկելու լիազորությունները:

Ըստ այդմ, հայցապահանջներից որևէ մեկի՝ քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու վերաբերյալ եզրահանգումները չեն բացառում դրանց կամ դրանցից որևէ մեկի՝ դատարանում քննության ենթակա չլինելու հանգամանքը, ինչին Դատարանը անդրադառնալու իրավասություն չունի, քանզի այդ հանգամանքը պետք է բացառի ՀՀ վարչական դատարանը»²:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյոք Երևան քաղաքի սուսջին արյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հերկությունն այն մասին, որ հայցապահանջներից որևէ մեկի՝ քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու վերաբերյալ իր եզրահանգումները չեն բացառում դրանց կամ դրանցից որևէ մեկի՝ դատարանում քննության ենթակա չլինելու հանգամանքը, որպիսին սույն գործով կարող էր բացառել հայցադիմումը վերահասցեագրելու մասին որոշում կայացրած ՀՀ վարչական դատարանը:*

7. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը, թիվ ՎԴ/4748/05/23 որոշմամբ արձանագրել է հետևյալը. «ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական

² Տե՛ս դատական գործը, թերթեր 81-85:

պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է արեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում սրանսպ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այսպես ինչ հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն սրանում է իր՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքերով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է ընդհանուր կանոն, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վրանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ոետայ)» իրավունքներ (տե՛ս, Կարինե Զլալյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

Դատական պաշտպանության իրավունքի իրականացումը հիմնված է փնտրիչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով փրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ փնտրիչելու իր նյութական ու դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները, անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե չդիմել դատարան, իրականացնել, թե չիրականացնել իր դատական պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել հարուցված հայցով իր պահանջների առարկան՝ ծավալը, հիմքը և այլն:

Միաժամանակ անձն իր դատական պաշտպանության հիմնարար իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս, պետք է առաջնորդվեն տվյալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) տեսանկյունից՝ դատարան դիմելու մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (տե՛ս, *Tolstoy Miloslavsky v. The United Kingdom* թիվ 18139/91 գանգադով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռ, կեր 59): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համարվել լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (տե՛ս, *Khalifaoui v. France* թիվ 34791/97 գանգադով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռ, կեր 36):

Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պարզաձև իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը:

(Իրե'ս, Dumitru Gheorghe v. Romania թիվ 33883/06 գանգադրով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռ, կետ 28)»³:

8. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝

1) հայցը ենթակա չէ դատարանում քննության. (...):

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդարյա չէ իրեն, այն պարճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդարության»:

«(...) Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են այն պայմանները, որոնց առկայությունն օրենքի ուժով անհնարին է դարձնում տվյալ հայցադիմումի հիման վրա արդարադարության իրականացումը: Միաժամանակ, օրենսդիրը ՀՀ վարչական դատարանին վերապահել է հայցադիմումը վերահասցեագրելու լիազորություն: Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդարյա չէ իրեն, այն պարճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդարության:

Հայցադիմումի ընդունելիության փուլում ՀՀ վարչական դատարանի ինդիրն է պարզել հայցադիմումը վերադարձնելու, հայցադիմումի ընդունումը մերժելու և վերահասցեագրելու՝ համապարասիանաբար Օրենսգրքի 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներով նախատեսված հիմքերի առկայությունը (բացակայությունը). դրանց բացակայության դեպքում ծագում է ՀՀ վարչական դատարանի՝ տվյալ հայցը վարույթ ընդունելու պարտականությունը (Օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մաս):

Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ վճարեկ դատարանը, բացահայտելով հայցադիմումը մերժելու նշված հիմքի բովանդակությունը, արճանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը

³ Տե'ս ՀՀ Վճարեկ դատարանի՝ թիվ ՎԴ/4748/05/23 վարչական գործով 2024 թվականի մարտի 25-ի որոշումը:

որդեգրել է այն կառուցակարգը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «հայրը ենթակա չէ դատարանում քննության» արտահայտությունը և նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության» արտահայտությունն ունեն միևնույն նշանակությունը, որը հանգում է հետևյալին. վարչական դատարանում գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման, եթե այդ գործի հիմքում ընկած վեճը (հայցապահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը, հայցադիմումով դատարանի առջև բարձրացված հարցը) ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին աստիճանի որևէ (ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված) դատարանում քննության: Հետևաբար վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելիս կամ այդ հիմքով գործի վարույթը կարճելիս վարչական դատարանը պարտավոր է ցույց տալ այն իրավական և փաստական հանգամանքները, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին աստիճանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու փյալ վեճը (տե՛ս, «Օլիմպ» արտադրական կոտպերաբիլն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0998/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

Վերահասարակելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա կարող է հայցադիմումի ընդունումը մերժել միայն այն պարագայում, երբ վեճը ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին աստիճանի արյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված որևէ դատարանի քննությանը, իսկ վեճի՝ միայն ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա չլինելու պարագայում ՀՀ վարչական դատարանը պետք է հայցադիմումը պարճառաբանված որոշմամբ վերահասցեագրի համապատասխան դատարանին: Այլ կերպ՝ հայցադիմումը վերահասցեագրելու՝ Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքի առկայությունը բացառում է Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով

հայցադիմումի ընդունումը մերժելու հնարավորությունը: Եթե ՀՀ վարչական դատարանի որոշման պարճառաբանական մասում շարադրված հիմնավորումներն ու փաստարկները հանգում են նրան, որ տվյալ վեճը ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերությունների տիրույթում է, ապա հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով. նման պարճառաբանության ու փաստարկման պայմաններում կիրառելի է վերահասցեագրման լիազորությունը: Ընդ որում, վերահասցեագրման լիազորությունն իրացնելիս ՀՀ վարչական դատարանը ելնում է միայն տվյալ իրավական վեճի՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա չլինելու և այլ դատարանի ընդդարյալ լինելու իրողությունից, և վերահասցեագրման լիազորությունը ենթակա է իրացման՝ անկախ իրավասու դատարանի կողմից կիրառելի դատավարական նորմերով նախատեսված ընդունելիության պայմանները, այդ թվում՝ դատավարական ժամկետների վերաբերյալ պահանջները բավարարելու (չբավարարելու) հանգամանքից:

Ըստ այդմ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ի կատարումն դատական ակտերը պարճառաբանելու պարտականության, Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելիս ՀՀ վարչական դատարանից պահանջվում է փաստարկել ու հիմնավորել տվյալ վեճի՝ որևէ դատարանի քննության ենթակա չլինելու հանգամանքը: (...)»⁴:

9. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. **Դատարանը յոթնորյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:**

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից փասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

⁴ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԳ/4748/05/23 վարչական գործով 2024 թվականի մարտի 25-ի որոշումը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավագոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: (...):»:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ասքանազ Խաչատրյանի ներկայացուցիչ Ս.Խաչատրյանը 2024 թվականի դեկտեմբերի 13-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան (այսուհետ նաև՝ Վարչական դատարան) ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի՝ թիվ ԵԴ1/1016/01/23 քրեական գործի ամբողջ նյութերը՝ բաղկացած 250+60+118+136 էջերից, չորս հատոր և լազերային սկավառակը, նիստերի ձայնային արձանագրությունը տրամադրելուն, ՀՀ փաստաբանների պալատին՝ հայցվորի շահերը պաշտպանելու համար նոր հանրային պաշտպան նշանակելուն պարտավորեցնելու և ներկա պաշտպան Սիփան Կետյանի հանդեպ կարգապահական վարույթ հարուցելու պահանջների մասին⁵,

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ տվյալ դեպքում ենթադրյալ վեճը չի կրում հանրային-իրավական բնույթ, հայցապահանջով ներկայացված գործողությունները չեն բխում հանրային իրավահարաբերություններից, կապված չեն պատասխանողի կողմից՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրացման հետ, ներկայացված պահանջները վերաբերում են **քաղաքացի-ՀՀ փաստաբանների պալատ մասնավոր-իրավական հարաբերություններին և կրում են քաղաքացի-իրավական բնույթ**, հետևաբար ներկայացված պահանջները ենթակա չեն քննության ՀՀ վարչական դատարանում⁶,

⁵ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2025 թվականի հունվարի 22-ի որոշմամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ գործի ենթակայությունը որոշելու համար: Անդրադառնալով ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Սիփան Կեսոյանի հանդեպ կարգապահական վարույթ հարուցելուն պարտավորեցնելու հայցվորի պահանջին, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ այն չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի նպատակներից և ենթակա չէ քննության ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով:

Անդրադառնալով հաջորդ հայցապահանջին՝ ՀՀ փաստաբանների պալատին հայցվորի շահերը պաշտպանելու համար նոր հանրային պաշտպան նշանակել պարտավորեցնելուն՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից հանրային պաշտպան տրամադրելու կամ տրամադրելը մերժելու հետ կապված հարաբերությունները չեն կարգավորվում մասնավոր իրավունքի նորմերով, ըստ այդմ, ֆիզիկական անձ վստահորդի և Փաստաբանների պալատի միջև առնվազն սույն դեպքում չեն առաջացել քաղաքացիաիրավական հարաբերություններ, ինչպես նաև հայցադիմումի փաստական հիմքում դրված չէ որևէ փաստարկ, որն արժևորվում է քաղաքացիական իրավունքի որևէ նորմով, հետևաբար քննարկվող պահանջը չի հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքի մասին վեճ և ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական դատավարության կարգով քննության: Ինչ վերաբերում է թիվ ԵԴ1/1016/01/23 քրեական գործի ամբողջ նյութերը՝ բաղկացած 250+60+118+136 էջերից չորս հատոր և լազերային սկավառակը, նիստերի ձայնային արձանագրությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջին, ապա Առաջին ատյանի դատարանը գտել է, որ դրանում նույնպես չկա քաղաքացիական իրավահարաբերության տարր և քրեական գործի նյութերը տրամադրելու պահանջը ևս ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Վերը շարադրվածի արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ սույն գործով հայցի առարկան կազմող հայցապահանջներից որևէ մեկը ինքնին չի կարող քննության ենթակա լինել քաղաքացիական դատավարության կարգով և միաժամանակ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ

հողվածի 2-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ և 81-րդ հոդվածների 1-ին մասերի իրավակարգավորումները, գտել է, որ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հանգամանքը պետք է բացառվի մինչև վեճը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա լինելու հանգամանքի ուժով այն ըստ ընդդատության վերահասցեագրելու լիազորության կիրառումը, նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը ընդհանուր իրավասության դատարանին վերապահել է վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը բացառապես վարույթ ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարան ուղարկելու լիազորությունները, ըստ այդմ, հայցապահանջաններից որևէ մեկի՝ քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու վերաբերյալ եզրահանգումները չեն բացառում դրանց կամ դրանցից որևէ մեկի՝ դատարանում քննության ենթակա չլինելու հանգամանքը, ինչին Առաջին ատյանի դատարանն անդրադառնալու իրավասություն չունի, քանի որ այդ հանգամանքը պետք է բացառի ՀՀ վարչական դատարանը⁷:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 7-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ գտնում ենք, որ հիմնավոր է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ հայցապահանջներից որևէ մեկի՝ քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու վերաբերյալ եզրահանգումները չեն բացառում դրանց կամ դրանցից որևէ մեկի՝ դատարանում քննության ենթակա չլինելու հանգամանքը, որպիսին սույն գործով կարող էր բացառել հայցադիմումը վերահասցեագրելու մասին որոշում կայացրած ՀՀ վարչական դատարանը:

Հարկ է արձանագրել, որ հիմնավոր է նաև Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումն առ այն, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ և 81-րդ հոդվածների 1-ին մասերի իրավակարգավորումների համատեքստում, *հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հանգամանքը պետք է բացառվի մինչև վեճը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա լինելու հանգամանքի ուժով այն ըստ ընդդատության վերահասցեագրելու լիազորության*

⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

*կիրառումը*⁸, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի իրավակարգավորումների պայմաններում, Վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը ստանալու դեպքում, սույն գործով Առաջին ատյանի դատարանն իրավասու էր կայացնելու բացառապես հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1. վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու, կամ

2. գործի ենթակայության կապակցությանը անհամաձայնության դեպքում՝ այն Վճռաբեկ դատարանն ուղարկելու վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ թիվ ՎԴ/15755/05/24 գործն ըստ Ասքանազ Խաչատրյանի հայցի ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի, պետք է ուղարկել ՀՀ վարչական դատարան:

Միաժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ Ա.Խաչատրյանի ներկայացուցիչ Ա.Խաչատրյանի հայցով ներկայացվել են **թիվ ԵԴ1/1016/01/23 քրեական գործի ամբողջ նյութերը տրամադրելու, սովյալ քրեական գործով մեղադրյալ (ամբաստանյալ) Ա.Խաչատրյանի շահերը պաշտպանելու համար նոր հանրային պաշտպան նշանակելու** և մեղադրյալ (ամբաստանյալ) Ա.Խաչատրյանի պաշտպան Ս.Կետյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պահանջներ, հետևաբար իրավաչափ չէ ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումն առ այն, որ տվյալ դեպքում **«ներկայացված պահանջները վերաբերում են քաղաքացի-ՀՀ փաստաբանների պալատ մասնավոր-իրավական հարաբերություններին, կրում են քաղաքացիաիրավական բնույթ»**⁹:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/15755/05/24 գործն ըստ Ասքանազ Խաչատրյանի հայցի ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի՝ ՀՀ փաստաբանների պալատին թիվ ԵԴ1/1016/01/23

⁸ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/4748/05/23 վարչական գործով 2024 թվականի մարտի 25-ի որոշումը:

⁹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

քրեական գործի ամբողջ նյութերը՝ բաղկացած 250+60+118+136 էջերից, չորս հատոր և լազերային սկավառակը, նիստերի ձայնային արձանագրությունը տրամադրելուն, հայցվորի շահերը պաշտպանելու համար նոր հանրային պաշտպան նշանակելուն պարտավորեցնելու և ներկա պաշտպան Սիփան Կետոյանի հանդեպ կարգապահական վարույթ հարուցելու պահանջների մասին, ուղարկել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ	ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ	ՆԱԽԱԳԱՀ
	ԳՈՌ ՀԱԿՈՒՅԱՆ	ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ	ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ	ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ	ՓՈԽԱՐԻՆՈՂ
	ՔՐԻՍՏԻՆԵ ՄԿՈՅԱՆ